

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

23. 11. 2015թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Դարբինյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Ասատրյանը - մարզպետի տեղակալ
- Տ. Բաղդոյանը - մարզպետի տեղակալ
- Ա. Մանուկյանը - աշխատակազմի ղեկավար
- Վ. Խաչատրյանը - աշխատակազմի ղեկավարի տեղակալ
- Հ. Պապոյանը, Ս. Լամբարյանը, Է. Մացակյանը, Ա. Ջանազյանը, Դ. Մանուչարյանը, Գ. Հակոբյանը, Ա. Օհանյանը, Լ. Բերդյանը, Ս. Ղուբաթյանը, Ս. Խալաթյանը, Ն. Սարգսյանը, Ա. Աղոյանը, Հ. Մկրտչյանը, Ա. Սահակյանը -մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Ա. Սարգսյանը - մարզպետի օգնական
- Տ. Էվինյանը - մարզպետի օգնական
- Ա. Չատինյանը - ՏԿ և ԱԻՆ Լոռու մարզային ՀՓԾ վարչության ներկայացուցիչ

Օրակարգում`

1. Անցյալ ժամանակաշրջանում տրված հանձնարարականների կատարման մասին:
2. Ընթացիկ հարցեր:

Հանձնարարվեց`

1. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ա. Մանուկյանին`  
Ամփոփել և ներկայացնել ամբողջական և վերջնական տեղեկատվություն ,, Հայաստան Համահայկական Հիմնադրամի,, մարաթոն- դրամահավաքի արդյունքների վերաբերյալ:  
/ժամկետ` 10 օր/
2. Մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Գ.Հակոբյանին`  
Ներկայացնել տեղեկատվություն ՀՀ կառավարության կողմից նախատեսված 2013-2014 թթ-ի սերմացուների համար չվճարված գումարների զիջման վերաբերյալ ըստ համայնքների:  
/ժամկետ` 5 օր/
3. Մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ն. Սարգսյանին`  
Շրջաբերական նամակով և մարզխորհրդի նիստին հայտարարությամբ տեղեկացնել համայնքների ղեկավարներին` ՀՀ կառավարության կողմից ընդունված և ուժի մեջ մտած որոշումների վերաբերյալ:  
/ժամկետ` 5 օր/
4. Մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Ա. Օհանյանին`  
ա/ Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից հողերի վարձակալության վճարների հավաքագրման տարեկան պլանային ցուցանիշների ապահովման ուղղությամբ:  
բ/ Տեսչական ստուգումների արդյունքում հայտնաբերված թերությունները և արդյունքները ամփոփել և դրանց վերացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել բոլոր համայնքներին:  
/ժամկետ` 5 օր/

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ



Ա. ՆԱԼԲԱՆՅԱՆ